



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

18593

891.99

S-52

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА служит не одному, а многим.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

891.99

Ա-52

ՕՐ.

ՄԻՐԱՆ ՅԵՐ-ԱՄՐԳԴԵՐՆԵՐ


1345

Վ4698.

Ա-29

Ա Յ Ր Ւ Ն

Պրովերե
1936 թ.



ՇՈՒՇԻ

Մամուռես - Յանձնելու պատրաստություն

1891

4220

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԴՅՈՒՆ

Дозволено цензурою Тифлисъ, 15 Августа 1890 г.



2827

41

Tipo-Լիտոգրաֆія A. M. Մյածուկոս, Շնառ.

№ 4698.

Ա.

Այս գաւառական քաղաքի արեգակն Օգոստոս ամսում բաւական տաքացրել էր քարած փողոցները, որոնց ջերմութիւնը ազատ շնչել չէր թողնում անցուդարձ անողին։ Փողոցներում չէին կարողանում կանգնել. մի կողմից բոռ ճանճն էր գողոսում բախկալների առաջ թաբախներում կիտուած ու տաքից քացիսած թաց մըքերի վրայ, միւս կողմից էլ արեգակի ալրող ջերմութիւնը բազարի մարդկանց քշել էր գետի տուն, գետի խանութիւնները, կամ գետի քաղաքից մօտ գտնուող ալգիների ծառերի շուաքը՝ ազատ շունչ քաշելու, հանգստանալու։

Բազարից քիչ հեռու թուրքերի թաղում գտնուող քարվանսարակի առաջ թուրք փուրգոնչիները ոտներնին հանած, իրանց ճաշակի և սովորութեան համեմատ, ծալապատիկ նըստած են տախտակէ շուաքարանների տակ։

Նրանց համար էլ տաք է. սղնձէ ալթաւաները իրանց կողքից չեն հեռացնում, մաքրասէր սզգ են, միշտ լուացուող, տռանց ջրի չեն մնալ, թէկուզ իրանց առաջ ամեն օր կիտուած է ձիանց աղբը, որից ամառուան տաքը սարսափելի գարշահոտեր և շնահոտեր է փչում նըրանց քթածակերին։ Պարսիկն ընդելացած է դրան, գարշահոտութիւն ծխելու ընդունակ է, իսկ ոտները միայն լուանալու սովոր...։

—Փարհաղ, ախր իսկի բազարներս լաւ չէ, ինչ պիտի լինի մեր ճարը. հարցնում է թուրք փուրգոնչին իւր նոքարին։

Փարհաղը լուռ է. նա տաքութիւնից չի կարողանում խօսել, մանաւանդ որ օրուջ է, սոված է, գլուխը սաստիկ ցաւում է։ Աստուած հեռո՛ւ տանէ թուրքին խօսացնելն օրուջ ժամանակ, մանաւանդ երբ ամառն է լինում այդ։

—Հրէս մուշտարի եկաւ. նուազած ձայնով կանչեց Փարհաղը իւր խալէնին։ Վերջինս մօտ եկաւ փընթփընթալով—«Էլի հայ!»։

—Ո՞ւր ես հրամայում գնալ. հարցրեց փուրգոնչին տաքից շնչարգել եղած ու քրտնած հային։

—Մենք պիտի գնանք Շ. քաղաքը։

—Քանի՞ հոգի էք։
—Մի ընտանիք, հինգ հոգուց բաղկացած.
Երեքը փոքը երեխաներ են, Քանի՞ կը տանէք։
—Ծանրուցք էլ ունիք։
—Քիչ. երկու թեթև հաջողաց։
—Քանի՞ փուժ կը լինի։
—Կը քաշէք—հինգ վեց փուժից աւել չի լինի։ Բայց գիտէք, բարեկամ, մենք այս իրիկուն պիտի գուրս գնանք. այսօր ամսի 27-ն է և 30-ին պիտի տեղ հասած լինինք. կարող էք հասցնել։

Փուրգոնչին դեռ ոչինչ պատասխան չըտուած, Փարհաղն էլի մին քթի տակը փընթփընթաց. Նա կատաղում էր, երբ մէկն այդպէս ժամանակ էր որոշում, թէ մինչև այսինչ տեղն այսքան օրումը պիտի տանես։ Նա էր տանողը. Զազար անդամ հազար մարդուկէս ճանապարհին թողած կը լինի, խոստացած ժամանակից մի քանի օր էլ ուշ տեղ հասցրած։ Նրա պարտքը չէ, թէ մարդը, ճանապարհորդը, այս ինչ օրը այս ինչ ժամին պիտի տեղ հասած լինի։

—Քան ու գործերնիս ինչ է, կը տանենք, կը հասցնենք. Բայց այսօր չենք կարող գուրս

գալ, փուրդոնին կոտրած տեղ կայ, շինել ենք
տալիս. վազը կը ճանապարհուինք՝ Աստուած
թողէ. առաւօտը կանուի շնչը բերէք, —պա-
տասխանեց փուրդոնչին:

—Բայց ո՞րքանով կը տանէք:

—Յայտնի է, էլի. եթէ մենակ դուք լի-
նիք՝ քսան մանէթ:

—Ուրեմն էլ ով պիտի լինի. մենակ մենք
ենք, հինգ հոգի, ինչպէս ասացի, և երկու
մաֆրաշ:

—Եթէ մարդ պատահի, ի՞նչ իմանամ, այն
ժամանակ մի բան կը պակացնեմ:

—Նատ լաւ. բէ՛ տուր:

Եւ փուրդոնչին հանեց իւր երկայն, կեխտի
մէջ սեացած չկան, քշկուռը ետ տարաւ ու
միջից մի թուղթ մանէթ հանեց, տուաւ հային:

Նու շտապեց տուն իրերը կապելու: Դռան
առաջ նրան հանդիպեց կինը և ուրախ տրամա-
դրութեան մէջ տեսնելով ամուսնուն՝ հարցրեց.

—Հը, ի՞նչ է, Սմբատ:

—Գնում ենք:

—Հեռագրի պատասխանը եկամւ:

—Այս:

—Ո՞րքանով:

—Զորս հարիւր մանէթ, ճանապարհածախքը
մեղանից: Ի՞նչ անեմ, անգործութիւնը մեզ
խեղգեց...: Դէ՛, շտամլ' ը, նունէ, փուրդոն
է՛լ եմ վարձել, շնոր, բաներդ ժողովի' ը, ինչ
որ ունես չունես հաւաքիր մաֆրաշների մէջ,
կապենք պնդացնենք:

Հետեւեալ օրն ամեն ինչ պատրաստ էր և
նրանք կէսօրից մօտ ճանապարհ ընկան:

¶.

Անցել էր ուղիղ մի տարի և հինգ ամիս:

Սօնիկը, Կարօն և Լևոնը կուչ եկած էին
խոնաւ սենեակի բուխարու առաջ և ամեն
մէկը կարծես աշխատում էր կրակը մտնել,
տաքանալ: Նրանց մայրը փշում էր փչում
կրակը, բայց չէր վառում: Երկու խանձողի
կտորներ բուխարու մէջ իրար արած, փոխա-
նակ վառուելու, փոխանակ սենեակը տաքա-
ցնելու, տակի պողերի վրայ մերթ ընդ մերթ
կաթկթում էին նրանց թացութեան քրտինքը
և փրսալով աւելի հանդցնում կրակը և ծու-
խը մըլլցնում, երկինք բարձրացնում: Կինը
դարձեալ փչում էր կրակը և գլուխը շշելուց
մի քիչ յետ նստում, ձեռքով ճակատը պինդ

բոնում, մի քիչ հանգստանում ու էլի փչում:

—Սչքը դուրս գայ քու փայտ տուողին. այսպիսի փայտն էլ բերեն ծախ. մէջին մի չորն էլ չկայ, որ ակնավառիչ շինեմ. եղածն էլ հանգաւ գնաց, հիւանդս ցրտումը սառաւ, ես ի՞նչ կրակը տամ գլխիս. —ասաց նա, թոնժորալով կրացաւ դէպի բուխարին, գրպանից մի երկու կտոր թուղթ հանեց, դրաւ կրակի ակնումը, լուցկիով վառեց: Թուղթն ալրուեց, սև մոխիր կտրեց և մնացին դարձեալ նոյն օրհասական կրակը, նոյն թաց փայտերը բուխարու մէջ սեացած:

—Մալրիկ, հաց տուր ուտենք. կրակը յետոյ էլ կը վառուի, —ասաց Կարօն:

—Կարօ, սպասի՛ր Գարեգինն ուսումնարանից գայ, գնայ հաց բերէ:

Սօնիկը և Լեռնը ոչինչ չէին ուզում գեռ. ալ ցրտից կապոյտ լեղակ կտրուած՝ մնացել էին սքըթած կրակի առաջ և ձեռքները մէկ բուխարուն էին դէմ անում, մէկ բերաններին բոնելով՝ ըլուր ուժով փչում տաքացնում:

—Հաց, մայրիկ... կրկնեց Կարօն:

—Քիչ գլուխս տար, Կարօ, ասացի որ Գարեգինն ուսումնարանից կըգայ, գնայ առնէ բերէ:

—Ը ը ը... զընջղընջում էր Կարօն: Բայց որտեղից էր այն բոպէին հաց: Դեռ նոր պէտք է հացի ճար տեսնէին. հարեաններից էլ այնքան փոխ էին առել, որ էլ երեսատեղ չէր մնացել...:

—Ճերիք է, հերիք, կոտորուէք դուք պըրծնեմ. ի՞նչ էք գլուխս տանում: Մէկը հաց, մէկը ջուր, մէկը շոր. ես որ մէկի պատասխանը տամ, Տէ՛ր Աստուած...—ասաց կինը և աչքերից գլորուող արտասուքի կաթիները թագուն սրբեց իւր կոշտացած ձեռքերով:

Այս ընտանիքը Սմբատի ընտանիքն էր և հիւանդն ինքը Սմբատը:

—Այժմ ձեր սիրտը բաւական հանգիստ պէտք է լինի. երէկ աւելի սաստիկ էր ձեր տաքութիւնը, և եթէ ալդպէս շարունակուի՝ շուտով կարող էք առողջանալ. —ասաց բժիշկը հիւանդին և հանելով ջէբից թաշկինակը՝ սրբեց ճակատի քրտինքը և խնամքով թափ տուաւ շորերի վրայ կիտուած ձիւնը: —Խթֆ... ի՞նչ սաստիկ ձիւն է գալիս. բայց ես դարձեալ ձմեռ ժամանակն էլ չեմ դադարում քրտնելուց:

— Հանգստացէ՛ք, բժիշկ, լոդնած կը լինիք,
— ասաց հիւանդը:

— Նատ եմ յօդնել, բայց նստելու և հանգստանալու միջոց չունիմ, որովհետև հիւանդներիս գրեթէ կէտ մասը չեմ ալցելել գեռ:

— Բժիշկ, ի սէ՛ր Աստուծոյ, օգնեցէ՛ք, — խնդրեց դիմացի կանգնած տիկինը, որի դէմքը հիւանդ ամուսնու խորին վշտից ալլալուել էր և անպաճոյն հագուստը անխնամ սանրած գլխի մազերի հետ մի անդուրեկան, բայց միենոյն ժամանակ վշտալի պատկեր էր ներկայացնում:

— Ոչի՞նչ, տիկին, շուտ կառողջանալ. մըրսելուց թոքերի թեթև բորբոքում է ստացել. սահանդացէ՛ք և... կառողջանայ:

Սմբատը տեսաւ, թէ ի՞նչպէս կինը պոկշնած բժշկի օգնութիւնն է խնդրում և աչքերը շրջելով նրա վրայ՝ նեղացաւ, որ նա այդպէս տանջուում է իւր հիւանդութեան պատճառով: Նա միշտ կեռջ հարցին պատասխանում էր «լաւ եմ»: Ինչքան էլ վատ լինէր նրա գրութիւնը, ալնու ամենայնիւ նոյն պատասխանը կը տար, որ կնոջ սիրտը շատ չի կոտրուի: Նունէն Սմբատի լուռ կշտամբանքի վրայ մի-

տեսակ փոշմանածի նման ետ քաշուեց ու լռեց: — Տիկի՞ն, մի կտոր թուղթ տուէք դեղատում գրելու:

Թուղթը և թանաքամանը պատրաստ էր:

— Բժիշկ, դարձաւ գէպի նա Սմբատը, անքնութիւնն ինձ տանջում է, խնդրեմ գրահամար էլ բան գրէք: Ամբողջ օր ու գիշեր պառկում եմ, այս ու այն կողքի վրայ շուռ գալիս, աչքս չեմ կարողանում խփել: Մահու չափ ծանրանում է դրութիւնս առանց քնելու: Կարդալ չեմ կարողանում գոնէ, որ ինձ համար մի զբաղմունք լինի, որովհետև աչքերս շաղուում են... սկսում եմ մտածել և այնքան եմ մտածում, որ գլուխս ուզում է տրաքուի:

— Նատ լաւ, դրա համար էլ մի բան կը գրեմ. Բայց դու երկար մի՛ մտածիր:

Եւ բժիշկն սկսեց գեղատոմսը գրել...

— Ձեզ հարկաւոր է հին և լաւ գինի ես քիչ քիչ գործ ածել: Ասաց բժիշկն ու գեղատոմսը վերջացնելով, սկսեց աչքի տակով նայել այս աղքատ ընտանիքի տնային կարգ ու սարքին: — Մի հասարակ տախտակէ սեղան, վրան կոտրուած լամպար և մի քանի գիրք, երկու

Հասարակ աթոռներ (տաքուրեթկայ), մի կոտրուած ու պարանով կապկալորած մահճակալ, որի վրայ պառկած էր հիւանդը, մեզ ծանօթբուխարին և նրա առաջ սքըթած երեխաները. — ահա ինչ էին աչքի ընկնում հիւանդի սենեակը մտնողին:

Բաւական երկար ու բարակ տնդղելուց յետոյ այս աղքատ ընտանիքի կացութեան վրայ, բժիշկը մի բան ևս նշանակեց տոմսի ճակատին ու թուղթը դէպի նունէն մեկնելով ասաց.

— Ահա դեղատոմսը, զրկեցէք դեղատուն և բերել տուշք։ Այդ գեղը գործ ածելուց հիւանդը կ'սկսի հանգստանալ և քնել։ Եւ վերջը լաւ կը լինի. բայց տաք պահպանեցէք, այդպէս չի կարելի…։

— Տժիշկը գլխարկը վերցրեց և, դեռ դռնիցը դուրս չեկած, յետ գարձաւ դէպի հիւանդը և ասաց.

— Հա, Սմբատ, մոռացայ ձեզ ասել. եթէ Ս.ստուած տալ առողջանաք, պէտք է անպատճառ փոխէք ձեր բնակարանը. այստեղ շատ խոնաւ է։ Եթէ հնար լինի հենց այժմէն փոխելու, շատ լաւ կը լինի, որովհետեւ խոնաւութիւնը մեծ հարուած կարող է տալ ձեր ալժմեան

դրութեանն անգամ…։

— Ի՞նչ անեմ, բիթշկ. պէտք է տան վարձը վճարեմ, յետոյ դուրս գամ ուրիշ տուն վարձեմ։ Իսկ այժմ… պէտք է հնազանդուենք ճակատագրին։

— Միթէ ոռնիկ չէք ստանում։

— Այս երկու ամիս է, ինչ որ հիւանդ եմ, չեմ ստանում…։ Առաջուայ ստացածիս կէսն էլ պարտքերս էի վճարում. իսկ կէսով ընտանիքս կառավարում։

— Ինչու ես պարտքի տակ ընկել։

— Զգիտէք, բիթշկ, վարժապետի դրութիւնը… ուսումնարանները փակ ժամանակ ինչով էինք ամլում… այնքան պարտք արի, որ մինչև կոկորդս խրուեց։ Հազիւ ահա տարի ու կէս է գործ ճարեցի, այս էլ այսպէս դարձաւ, և այս օր այս ահագին ընտանիքն իմ երեսս է նայում… ասաց Սմբատը և մի ծանր հառաչնք արձակեց իւր սրտի խորքից։

Այս արդար բողոքի վրայ կինը չկարողացաւ իրեն պահել և արտասուքը խեղդելով՝ երեսը գէպի լուսամուտը դարձրեց, մի խուլ հեծկլատանք արձակեց։ Կնոջ բարակ ճիչը լսելի եղաւ և՝ բժշկին և՛ հիւանդին։ Հիւանդն ամօթից

խեղդուելով՝ ընդհատեց ալդ ձայնը, դառնալով
դարձեալ դէպի բժիշկը.

— Ներեցէ՛ք, բժիշկ, որ չեմ կարողանում
այժմ ձեզ վարձատրել... աղաջում եմ, օդնե-
ցէ՛ք ինձ մարդասիրաբար, ալցելեցէ՛ք ամեն օր
և առողջանալուց առաջին պարտքս ձեզ...

— Ո՛չ, ո՛չ, այդպիսի բան մի ասեք խնդրեմ,
ինձ ոչինչ չի՝ պէտք. իմ պարտքս է ձրի ալ-
յելել աղքատ հիւանդին, մանաւանդ ուսուցիչ
հիւանդին: Ես ի՞նքս էլ աղքատ ուսանող եմ
եղել և գիտեմ ի՞նչ նեղութիւններ է կրում
աղքատը: Աղքատութիւնը մարդու գրպանում
կոպէկ չի թողնիլ: Նա սոսկալի՛ է սոսկալի՛ և
մարդուս մինչև թշնամու գուռը տանող: Դրա
համար գուռք անհանգիստ մի՛ լինիք և ուրիշ
բան մի՛ կարծէք... գուռք լաւ կը լինիք, միա-
մի՛տ եղէք, և ես կաշխատեմ միշտ ձեզ ալ-
յելել... Մեր պարտքն է ո՛չ միայն ալցելել
հիւանդին ու բժշկել, այլ և հոգ տանել նրա
ապրուստի մասին, եթէ նա աղքատ է, եթէ նա
ձեզ նման...: Եւ բժիշկը երեսը դարձնելով
դէպի միւս կողմը՝ հանեց գրպանից մի ինչ որ
բան և սեղանի վրայ դնելով ասաց.— Երբ կա-
ռողջանաք, գործի գնաք և ոռճիկ ստանաք՝

կը տաք: Առ այժմ ծախսեցէ՛ք ալդ ձեր տան
պակասութիւնների վրայ և չժողնէք, որ երե-
խալքդ սոված մնան:

— Ախ՛, բժիշկ, ալդ ի՞նչ էք անում. դուք ինձ
չափազանց պարտաւորացնում էք և անհան-
գիստ դրութեան մէջ դնում: Ի՞նչպէս պէտք
է ես պարտավճար լինեմ արդեօք:

— Խոկի՛ անհանգիստ մի՛ լինիք, սիրելիս,
ես իմ պարտականութիւնս եմ կատարում, այն,
ի՞նչ որ ճշմարիտ քրիստոնէութիւնն է պա-
տուիրում, ինչ որ կատարեալ մարդկութեան
սկայմաններն են սպահանջում. և ես ինձ դրա-
նով միսիթարած եմ համարում:

— Դէ՛հ, ցտեսութիւն... ցտեսութիւն, տի-
կին, մի՛ նեղսրտիք, լաւ կը լինի...: Երբ դեղը
կը բերեն, թող երկու անգամ ընդունէ, մէկը՝
հենց բերելուց իսկոյն, իսկ միւսը երկու ժամից
լետոյի:

Բժիշկը դուրս գնաց:

Դ.

— Նունէ՛, նայիր այնտեղ, սեղանի վրայ նա
մի բան գրաւ, կարծես փող լինէր. — ասաց
հիւանդը կէս ուրախ և կէս ամաչկոտ ձայնով:

Նունէն շտապով թռաւ գէպի սեղանը և
ինչպէս սոված երեխան ազահաբար յարձակւում
է հացի վրայ, այնպէս էլ նա ձեռքն արտառ-
թեամբ մեկնեց սեղանին և մի ինչ որ ծալած
թղթադրամի փաթոթ վերցրեց: Բոպէական
ուրախութիւնը մոռանալ տուաւ նրա մի քանի
ըոսկ առաջ տիսուր արտասուքը, մի թեթև
ժպիտ անցաւ նրա երեսով և նա ուրախու-
թիւնից դողացող ձեռքերով ետ տարաւ թղթ-
թադրամի ծալն ու սկսեց համրել — 10, 3, 1,
1=15 ըուբլի: Այս ինչու տուաւ, Սմբատ,
ուզեցիր:

— Ոչ, Նունէ, ես նրանից ոչինչ չուզեցի,
մինչեւ անգամ խնդրեցի, որ մեզ չպարտաւո-
րացնէ: Բայց նա այնպիսի՝ մի մարդասիրական
հոգի ունի, որ միշտ այգպէս օգնում է աղ-
քատ հիւանդին: Ես վաղուց կը ճանաչեմ դրան.
մեր քաղաքում երկու տարի բժիշկ է եղել:

— Սմբատ, սրանից ի՞նչքան ուղարկենք գեղի:

— Երկու ըուբլի տուր, աւելը յետ կը բերէ:

— Բայց ում ուղարկենք. Գարեգինն էլ ու-
սումնարանից գեռ չի եկել:

— Ժամը քանիսն է, որ չի եկել:

— Բժիշկը որ նայեց՝ տասն մէկն էր:

— Կանչի՞ր Սարաւեցունց տղային, խնդրի՞ր որ
այսօր էլ գնայ, տեսնենք ի՞նչ գառնում վերջը:

Նունէն կանչեց հարեւանի տղային՝ Տիգրա-
նին և յանձնելով նրան, դեղատումսը երկու
րուբլու հետ, խնդրեց գեղատուն վազել: Տիգ-
րանն ուսերը վարիվեր արեց, իբրև գնալու
անհամաձայնութեան նշան, և մինչեւ հիւանդը
մի քանի անգամ չխնդրեց անկողնի տակից,
նա չգնաց դեղի....:

Կէս ժամից յետով դուռը բացուեց և տղան
ներս մտաւ գեղը ձեռին, երկու րուբլին էլ
հետը:

— Ի՞նչ է, մոռացար փողը տալու, թէ
չառին. — Հարցրեց Նունէն, առնելով Տիգրանի
ձեռից կարմիր թղթերի մէջ փաթաթուած
դեղերը և փողը:

— Ոչինչ չտուի, առանց փողի տուին:

— Ինչու, չհարցրէր պատճառը:

— Հարցրի, ասացին ալդպէ՛ս է գրած....:

— Ո՞րտեղ:

— Դեղատումսի վրայ:

Նունէն առաջին անգամն էր լսում և տես-
նում, որ դեղատանն էլ առանց փողի բաց
թողնեն: Եւ յետ բերած դեղատումսը մօտեցրեց



Սմբատին: Հիւանդն առանց տօմսն առնելու,
հենց կնոջ ձեռին, նաև զրան և կարգաց
„gratis“.

—Ա՛խ, թնչ է անում այդ բժիշկը. դեղն էլ
է ձրի տալ հրամայում: Պիտի երախտահատովց
լինեմ ես դրան երբ և իցէ, Տէր Աստուած...:

—Սմբատ, մի բան չտամ այդ տղային,
հարցրեց նունէն:

—Տուր:

Եւ տիկինը մի սև փող տալով տղային ասաց.

—Շնորհակալ եմ զաւակս, առ, այդ էլ քեզ
համար մի բանի կը տաս:

—Նատ շնորհակալ եմ, ասաց տղան, և
երեք կոպէկանոցը ձեռին պինդ բռնած գլուխ
տուաւ ու դուրս գնաց:

Այդ միջոցին նունէն իսկոյն բժշկի պա-
տուիրածին համաձայն սլատրաստելով դեղը՝
մօտեցրեց ամուսնուն:

—Ա՛ռ, Սմբատ, իմի՞ր:

—Ուհ, ինչքան ծանը է թւում ինձ այդ
անիծեալ դեղն ընդունելու. ես նողկում եմ
իմելուց, զզուել եմ միանգամայն:

—Զրով խմիր, լաւ կը լինի, բերանդ էլ կը
մաքը:

—Դէ՛ մի քիչ ջրի մէջ կաթացրու տուր ինձ
և թո՛ղ քիչ հանգստանամ: Ուրեմն այս օր չես կարգալու:
—Ո՛չ, ձանձրանում եմ:
—Դէ՛, հանգստացի՛ր, էլ չեմ խօսայնիլ:
Ե.

Սմբատն ընկաւ երեակայտական իշշողութիւն-
ների մէջ և միանգամայն իւր վառ երեակա-
յութեան մէջ տեսաւ իւր անցեալի վիալական
պատկերը: Տեսաւ իրան ձեռք ձեռքի տուած
զբունելիս օդինութ նունէի հետ շագանակի ծառի
թանձր շուաքում՝ այգու մէջ, ուր բայա-
տրում էր նրան թէ ինչպէս շագանակները
հանում են փուշփշու կեղեկի միջից...: Ահա
մութն է, զբունողները թողնում են արգին
և տուն դառնում: Նունէն վառուած սիրա-
հարի նման լսում է Սմբատի բացատրութիւն-
ներն ամեն մի աչքի ընկնող ծառի, բոյսի և
ծաղկի վրայ: Տեսաւ ահա, որ ինքը և նունէն
կանգնած են մի մեծ սև քարի առաջ և նրան՝
այդ անխօս ու վիթխարի քարին իրանց վկալ
բանած՝ երգում և խոստում են անում իրանց
ապագալ կեանքի համար: Քանի՛ քանի անգամ

նրանք զբունելով դէմ են եկել այդ քարին,
քանի երեկոներ՝ մինչև կէս գիշեր, նստել են
այդ քարի առաջ և ապագայի համար ծրագիր-
ներ կազմել: Կարծես լուսնեակը միայն շատ
անգամ նրանց սթափեցրել է սիրոյ վառուած
րոպէներից, լիշեցրել է, որ վերջապէս ժամա-
նակ է տուն դառնալու և շատ անգամ էլ
յանդիմանել է թէ ձեր առաջն է ամբողջ ձեր
կեանքը, դեռ շատ ժամանակ ունիք խօսելու,
էլ ինչ էք այդքան ուշանում...:

Նունէն կամաց կամաց մօտեցաւ հիւանդի
անկողնին և տեսաւ որ նա քնած է: Հիւանդը
մի ինչ որ ճռուոց հանեց, շուռ եկաւ ձախ
կողքի վրայ և լոեց: Բժշկի գրած դեղը ներ-
գործել էր նրան: Նա քնեց, իսկ երեակայու-
թիւնն արթուն էր...: Սենեակի դուրսը վզգում
էր ձիւնախառն քամին և երեմնակի քամուց
առաջացած սաստիկ չըխկոցը մարդու սիրտն
ահ ու դոլ գցում: Դմաննում ես որ ահա դուրսը
խիստ ցուրտ է, տեսնում ես որ քամու հո-
սանքից ձեան քուլաները դռան ճեղքերով
սենեակի ներսն են թափւում...:

Երեի մի ինչ որ միտք աւելի զօրեղ եղաւ
հիւանդի լուռ երեակայութիւնը շփոթելու և

նա սկսեց զառանցել.

«Ա՛խ, Տէ՛ր Աստուած, այս ինչ են ուզում
ինձանից երեխալքս...: Կարօ-ջան, ես քեզ հա-
մար շորեր կառնեմ, գիրք կառնեմ և քեզ հետո
ուսումնարան կը տանեմ. Էլ ինչ ես լաց լինում:
Սօնիկը թող մնալ աանը մալրիկին օգնելու.
Նա մենակ է և գործը շատ: Նրան էլ տանը
կը կարդացնենք»:

Երեխաները մնացին լուռ միմեանց երեսի
նայելիս, իրանց հօր այս անակլնկալ խօսքերի
վրայ: Կարօն, այդ հինգ տարեկան միամիտ
երեխան, ուզեց վեր թռչել տեղից և հօր մահ-
ճակալին մօտենալ, որ տեսնէ ի՞նչ է ասում
հալը, բայց մալը «սուսմ» ասաց և ձեռքը
բերանին դրած՝ լոելու նշանով հասկացրեց
նրան, որ իրան հետ չէ խօսում հալրիկը, այլ
«քնի մէջ է»: Կարօն, իրաւ, մօրը խուլ նշան-
ներին հետեւելով լոեց մի քիչ, բայց յետոյ էլի
նրա մանկական սիրտը չդադարեց հարցնելու:

—Մալրիկ, ինչու հալրիկը ալնպէս խօսում
է. ես նրան ինչ եմ ասում,—հարցը նա
ցած ձայնով:

—Ոչի՞նչ, բալի՛կս. քնի մէջ մարդիկ միշտ
այդպէս կը խօսեն...: Մօր փակ պատասխանը

որդու սրտին և հետաքրքրութեանը ոչինչ բաւականութիւն և հանգստութիւն չտուաւ և նա թէպէտ այլ ևս հարց ու փորձ չարաւ, բայց մնաց մտմտալիս, մերթ հօր անկողնին նախելով, մերթ մօր երեսին...:

Կէսօրից բաւական անցել էր: Սմբատը երեսը դարձրած դէպի միւս կողմը, հազար ու մի ուրախ և տիսուր լիշողութիւններ գնում դալիս էին նրա գլխում: Նա ոչ քնած էր, ոչ արթուն, միայն երեակալութիւնը, անցեալի լիշողութիւնները վառ էին նրա մէջ: Ահա ուսումնարանի զանգը հնչեց, աշակերտները դուրս եկան բակը, մի քանի ըսպէից դարձեալ հնչեց, դասը մտաւ և ինքը կարծես կանգնած դասարանում՝ աշակերտների առաջ՝ խօսում է.

«Դուք, սիրելիներ, շուտով կ'աւարտէք ուսումնարանը, որի դռները տարրական ուսման գրեթէ բոլոր դժուարութիւնները լաղթեցին: Այժմ ձեր առաջ բաց է մի քանի տեսակ ճանապարհ, անաչառ եղէք ձեր լնտրութեան մէջ և մտածեցէք առանց վռագելու: Կշռեցէք իւրաքանչիւրդ ձեր գիտութեան չափը, զըննեցէք լուսաւոր և թոյլ կողմերը և թողէք ձեր ընտրութեան առաջնորդը ձեր սիրտը լինի.

ամեն բան սրտի թելագրութեամբ գործեցէք: Զեր ընկերների մէջ կան այնպիսի փոքրեր, որ մինչեւ անգամ եթէ ուզեն իրանց ուսումը շարունակելու որեւից միջնակարգ կամ բարձր ուսումնարանում, հեշտութեամբ կը տանեն գործը և ժամանակ կունենան ուղղուելու: Լաւ է մի երկու տարի ժամանակ սպանել, քան թէ անհամապատասխան լնտրութեամբ աղաւաղել բոլոր սովորածը և միայն մեքենայաբար կրկնել անցածները, առանց նորից մի բան ըմբռնելու: Ես մի ընկեր ունեի, որ ինձ հետ միասին աւարտեց Ուշական գպրոցը և աւարտելուց յեալ նոր իմացաւ, որ ինքն անպէտք է եղել կարդալու և կարդացածից շատ քիչ բան է հասկացել: «Ես կարող եմ միայն աստիճանաւոր լինել պետական որեւէ ծառայութիւն մտնելով, — ասում էր նա, — բայց ոչ ի հարկէ մեր ուսումնարանի նպատակին ծառայող մի անհատ, որը շատ բարձր է երևում իմ աչքին»: Հաւատացնում եմ, նա այն աստիճանաւորներից էլ չի լինի գոնէ, որ կարողանում են աչալրջութեամբ որեւէ պաշտօն վարել: Եւ իսկապէս ասած մեր գիւանատներում ծառայողների մի ստուար մասը ուսման ծանր լծից

փախչող մի-մի ծոլլեր են, որ ուրիշ բանի
անպէտք լինելով՝ մտնում են այդ տեղերք,
լոկ արտագրութեամբ պարապուելու և իրանց
համար ամսական մի կտոր հացի փող ստանա-
լու...: Իսկ ձեզանից մի՞նն էլ ծոլլ և տգէտ
աստիճանաւոր գառնալու հակոմ չունի: Ես
ճանաչում եմ ձեզ և գիտեմ, որ ամեն մէկիդ
սիրտը բարախում է թէ՛ երբ կ'ստանայ իւր
ուսման վկայականը»:

Սմբատի քնի մէջ խօսած այս քարոզները
կցկտուր կերպով լսում էր նունէն, որ ձեռ-
քերը խաչ արած, կուչ եկած էր սենեակի մի
խորշում: Նա մի քիչ լոեց և ապա շարունակեց.

«Ի՞մ սիրելիներ, աշխատեցէք, եթէ իրա-
ւացի էք դատում իմ խրատները, ուղղել ձեր
կեանքը ճիշտ այնպէս, ինչպէս աւանդում եմ
ձեզ այս խօսքերով, և յետոյ կ'զգաք, որ նրանք
դին ունին կեանքի մէջ: Զեր մէջ ես գիտու-
թեան նշոյլներ եմ տեսնում. լուսաւորութեան
հետեւող եղէք: Իհարկէ ամենքդ միակերպ
ընդունակութեամբ չէք օժտուած, բայց ընու-
թիւնը ձեզ շնորհք ու ձիրք է տուել. աշխա-
տեցէք օգուտ քաղել նրանից և ծանօթացէք
գիտութեան ամեն մի ճիւղին հետ: Զգտեցէք

աշխարհի բոլոր խաւերին էլ ծանօթանա-
լու. շատ հարկաւոր է ձեզ այդ ձեր կեանքի
մէջ և միայն հեռու կացէք անդործ, պորտա-
բոյծ և անբարոյական շրջաններից: Ամեն մէկդ
մի-մի արեգակ եղէք ապակու միջից թափան-
ցելու և ոչ ապակի արեգակի ճառագալիթնե-
րից լուսաւորուելու: Եթէ ճակատի զուով և
կամակոր ուժգնութեան օգնութեամբ շատ
տգէտներ բաղդաւորութեան գագաթնակէտին
հասնելով նշանաւոր մարդիկ են դառնում, ոչ
ապաքէն տաղանդաւոր, շնորհալի և ժիր մշակն
աւելի բարձր բաղդի և աստիճանի կարող է
հասնել և նրան աւելի պարտական է գնա-
հատել ժողովուրդը...: Ազնիւ եղէք և արդա-
րութեան ծանապահով ընթացէք: Կը գալ
ժամանակ ելք մենք ձեզ հետ չենք լինի, կը
բաժանուինք ձեզանից, բայց այս խօսքերն
արձագանք կը տան ձեր սրտերում...:

Զանգը կրկին խփեցին: Դասը վերջացաւ:
Բայց այս դաս չդառաւ: Ինչու այսպէս էր,
ինքն էլ չգիտէր...:

Հինգ օրից յետոյ մի անշոյք դադաղ, մի

քանի յուղարկաւորների մասնակցութեամբ
միայն, տարին հողին յանձնեցին: Այդ Սմբատ
վարժապետի դագաղն էր: Նա երկար չէր կա-
րողացել դիմանալ ցաւին, մեռել էր:

Շատերն ափսոսացին, շատերը ցաւ յայտնե-
ցին նրա համար, նրա որբերի համար, բայց
այդ էլ, ինչպէս սովորութիւն է մեզանում,
բոպէական էր: Դարձեալ ամեն մարդ իւր
գործին կացաւ, ամեն ձեռք իւր գլուխը լաց
եղաւ, իսկ որբի համար մտածող չեղաւ: Սուտ
չէ ասած ախր այն ժողովրդական առածը թէ՝
«որբին ջան ասող շատ կը լինի, իսկ ձեռքը
պատառ տուող քիչ»:

Չմեռը դարձեալ իւր սովորական բուքն ու
ըրլաններն անում էր Եռում: Ցուրտ էր և
ձիւն էր գալիս նաև վարժապետի թալման օրը
և նրանից յետով, և ամիսներով շարունակ
արևի երես չէր տեսնուում:

Մի մարդ վաղ առաւօտից այդ ցրտին կանգ-
նած է վարժապետի կենում տան մեծ դռան
առաջ և սպասում է տան տէրին:

— Զեկաւ: Հարցրեց նա դուռը դուրս եկող
և ցրտից մէկ էլ արագ դէպի տուն փախչող
պատանուց:

— Գալիս է: Եղաւ միայն պատանու պա-
տասխանը:

Ոչխարի մորթուց կարած փափուկ մուշտա-
կում, նոյնպէս փափուկ՝ ուղտի բըթից գոր-
ծած ձեռնոցները հագած դուրս եկաւ մի մարդ,
քոշերը հագին և կալիկի տալով մօտեցաւ
դռանը:

— Օ՛, դու ես, Մօսի:

— Ե՞ս եմ, ես, ա քո տունը շինուի, այս-
քան ցրտումը կը կանգնացնեն. սառի պլծի: . . .

— Դէ՛, գնանք ներս:

— Զէ՛, վնաս չունի. թէ մի խաբար իմա-
ցիր, հենց ալսեղ ասի՛, գնամ:

— Ե՛հ, միւնոյն է, ինչ իմանամ. տունն
իմս չէ. կասեմ դու՛րս, դուրս էլի՛:

— Բաս չպիտի ասես, որ իրան համար տուն
վարձէ:

— Զէ՛, որ ասեմ՝ կուշանայ, տանս վարձն
էլ հետը կը կորչի: Լաւ է հենց էսօր համ
ասեմ, համ դուրս գցեմ:

— Ուրեմն գնամ պատրաստուեմ:

— Հա՛, գնա՛:

Մարդք գնաց. իսկ կաղը յետ դարձաւ ինքն
իրան փընթփընթալով՝ «ինչո՞ւ թողնեմ. սա

քսան է տալիս, նա երեսուն»։

Կաղն այնպիսի՝ ձայնով ասաց ալս խօսքերը տուն մտնելիս, որ նունէն իւր սենեակում լսեց։ Լսեց և խսկոյն հասկացաւ որ բանն ինչումն է. իրան պիտի դուրս անէին տանիյ։

Կաղ - Թոմասը Սմբատի տան տէրն էր. նա ամենքին յայտնի էր իրըև մի անգութ վաշխառու, բոլորին քերթող, բոլորին զրպարտող, վատը լաւի տեղ ասող, սուտը ճշմարտի տեղ, մէկ տուող, տասն առնող, տասի տեղ հարիւր հաշւող, որի թալակն էր ընկել և անծանօթ օտարականը - Սմբատը։ Խեղճի մեռնելուց յետով, գեռ հինգ օր չանցած, նա իւր տունը ուրիշի վարձով էր տալիս. հէնց այն տունը, այն սենեակը, որտեղ ապրում էին նրա թշուառ ալրին և ողորմելի որբերը. Երևի յոլը կտրուած, որ ոչ մի տեղից չպէտք է ստանայ իւր տան վարձը, Թոմասը, հենց այդ օրը, թակով մահակով և անսասելի հայոյանքներ տալով դուրս էր տալիս վարժապետի բնակարանից նրա եղած - չեղածը։

— Շնորհ արէք Թոմաս - ապեր, թողեցէք մնանք այստեղ և ձմեռնենք անցնենք։ Ո՞ւր գնամ ախը ես այս ձմեռնենք։

Ճեծեմ, ո՞րտեղ ապաստանուիմ։ — Խնդրում էր նունէն։

— Տունս ուրիշի եմ տուել վարձով. խօսել պիծել եմ, այսօր պիտի գան հաւաքուին. էլ չեմ կարող խօսքս ետ առնել...։ Երկու ամսուայ վարձս էլ մնում է գեռ. եօթը ըռւբլի է, գիտես։ Կամ փողը ճարեցէք տուէք, կամ շաղանըր (կաթսա) պիտի վերցնեմ եօթը ըռւբլու տեղ։

— Ախը, Թոմաս - ապեր, Սմբատը մեռնելուց երեք օր առաջ կանչել չտուած քեզ և երկու ամսի վարձը վճարեց. Էլ Բնչ ես պահանջում։ Ես շատ լաւ գիտեմ, ի՞նքս եկի քեզ կանչեցի և այն փողը նա բժշկի տուած փողից տուաւ քեզ, եօթը ըռւբլի էր, յիշում ես. Համ էլ ասաց՝ «Թոմաս - ապեր, մնացի քեզ պարտ քսան օրուայ վարձ»։ Հիմա տասն օրը դառել է տասն վեց օր. դու ստաց տասն վեց օրուայ վարձդ և թող ապաստանուինք այստեղ, այս ցրտերն անցնի, գարունը բացուի, դուրս կը գնանք։ Վարձդ էլ, եթէ փող չլինի, այն ժամանակ ես իմ ձեռքով իմ կաթսան քեզ կը տամ փողի տեղ...։

— Զէ՛, չէ՛, այն փողը Սմբատն ինձ ձեռաց

պարտ էր՝ տուաւ, դու պէտք է անպատճա՛ռ
երկու ամսուայ վարձը տաս և այսօր իսկ
գո՞ւրս գնաս. էլ պահելու հալ չունիմ, ասացի
որ տունս վարձով եմ տուել ուրիշի, պրծել:

—Ուրեմն ստա՛ց տասն վեց օրուայ վարձ:

—Չեմ կարող, պիտի տա՛ս և գուրս գնաս:

—Ախը առանց այդ էլ տեսնում ես որբե-
րիս համար հացի փող չունիմ, որտեղից տամ,
կամ ինչո՞ւ տամ զուր տեղը:

—Նա՛տ մի խօսիր. ուզում ես հենց էօրշան-
տոշի՛ր ետ քաշեմ, ասեմ իսկի մի կոպէկ էլ
չեմ ստացել վեց ամսուայ վարձից, բոլորը
մնում է: Ես որ այդ չեմ անում, քեզ ինչ է
եկել: —Ասաց կաղ —Թոմասն ու կաթսան
կրակից վերցնելով, միջի ջուրը դէն ածեց և
կաթսան շպրտեց դէպի իւր տան ներսը:

—Թոմա՛ս-ապեր, մեր դրութիւնը չես տես-
նում. արտասուքն աչքերիս, որբերս հացի
կարօտ. այդ դու ի՞նչ ես անում և խիզճդ
ինչպէս է հրամայում, որ որբի ապրանքին
ձեռը տաս:

—Չէնդ կտրի՛ր, լի՛րբ. դուքս կորէք այս-
տեղից. ասաց կաղ —Թոմասը և կրկին ներս
մտնելով բռնեց փոքրիկ Լեռնի ձեռքից ու

ձգեց ձիւնի մէջ:

Երեխան թաւիլ տուաւ ձեան մէջ, լաց ե-
ղաւ և ձեռքերը կապոյտ լեղակ կտրուած վեր
կացաւ մղկտալով. վա՛ր, մայրի՛կ, մրսում
եմ...:

Է.

Մմբատի մեռնելուց յետոյ նունէն ուզեց
վերադառնալ իւր հայրենի երկերը, բայց ձիւն
ձմեռն էր, գնալ անկարելի էր, մանաւանդ որ
փող չունէր ճանասլարհածախքի համար: Նա
վճռեց մինչև գարուն մնալ այստեղ և գարնան
սկսելուն պէս վերադառնալ հայրենիք: Բայց
մինչև գարունն էլ հա՛ց էր պէտք, չկար: Նա
մտածում էր, որ հայրենիքը ում նրան կօգնէին
գոնէ իւր հանգուցեալ ամուսնու ազգական-
ները, նրա որբերին հին շորեր կը տալին,
հացի պատառ դէմ կանէին: Մտածում էր
զրել նրանց՝ ամուսնու ազգականներին, յայտ-
նել ամեն բան, յայտնել իրանց վիճակը և
օգնութիւն խնդրել, ցամաք հացի փող ուզել,
բայց ում գըէր, ի՞նչ երեսով. նրանց պարտքը
դեռ մնում էր: Ուրեմն այստեղ մինչև գա-
րուն պիտի ապրէր մի կերպ: Ինչո՞վ ապրէր...:
Փորձեց նա ուրիշների համար լուացք էլ անել,

պարտ էր՝ ժողովաւ, դու պէտք է անպատճա՞ռ
երկու ամսուայ վարձը տաս և ալսօր իսկ
դուրս գնաս. էլ պահելու հալ չունիմ, ասացի
որ տունս վարձով եմ տուել ուրիշի, պրծել:
—Ուրեմն ստաց տասն վեց օրուայ վարձ:
—Զեմ կալող, պիտի տա՛ս և դուրս գնաս:
—Ախը առանց այդ էլ տեսնում ես որբե-
րիս համար հացի փող չունիմ, որտեղից տամ,
կամ ինչո՞ւ տամ զուր տեղը:
—Նա՛տ մի խօսիր. ուզում ես հենց երշա-
տրական ետ քաշեմ, ասեմ իսկի մի կոռէկ էլ
չեմ ոտացել վեց ամսուայ վարձից, բոլորը
մնում է: Ես որ այդ չեմ անում, քեզ ինչ է
եկել: —Ասաց կաղ —Թոմասն ու կաթոսն
կըակից վերցնելով, միջի ջուրը դէն ածեց և
կաթոսն զպրտեց դէպի իւր տան ներսը:
—Թոմա՛ս - ապէր, մեր դըութիւնը չես տես-
նում. արտասուքն աչքերիս, որբերս հացի
կարօտ. այդ դու բնչ ես անում և իսկանդ
ինչպէս է հրամալում, որ որբի ապրանքին
ձեռը տաս:
—Զէնդ կտրի՛ր, լի՛քք. դուրս կորէք այտ-
տեղից. ասաց կաղ - Թոմասը և կըկին ներս
ժանելով բոնեց փոքրիկ կեռնի ձեռքից ու

ձգեց ձիւնի մէջ: Այսուհետու ազգ
Երեխան թաւիլ տուաւ ձեան մէջ, լաց ե-
զաւ և ձեռքերը կապոյտ լեղակ կտրուած վեր
կացաւ մղկտալով. վա՛ր, մալրի՛կ, մըսում
եմ...:

Է.

Սմբատի մեռնելուց յետոյ նունէն ուզեց
վերադառնալ իւր հայրենի երկիրը, բայց ձիւն
ձմեռն էր, գնալ անկարելի էր, մանաւանդոր
փող չունէր ճանապարհածախքի համար: Նա
վճռեց մինչև գարուն մնալ այստեղ և գարնան
սկսելուն պէս վերադառնալ հայրենիք: Բայց
մինչև գարունն էլ հա՛ց էր պէտք, չկար: Նա
մտածում էր, որ հայրենիքում նրան կօգնէին
գոնէ իւր հանգուցեալ ամուսնու ազգական-
ները, նրա որբերին հին շորեր կը տալին,
հացի պատառ դէմ կանէին: Մտածում էր
դըել նրանց՝ ամուսնու ազգականներին, յալտ-
նել ամեն բան, յալտնել իրանց վիճակը և
օգնութիւն խնդրել, ցամաք հացի փող ուզել,
բայց ում գըէր, բնչ երեսով. նրանց պարտքը
դեռ մնում էր: Ուրեմն այստեղ մինչև գա-
րուն պիտի ապրէր մի կերպ: Ինչո՞վ ապրէր...:
Փորձեց նա ուրիշների համար լուացք էլ անել,

կար ու կարկատան էլ, բայց այդ էլ չտուին
քաղաքացիք։ Ամեն մարդ իւր աղքատ բա-
րեկամին, ազգականին էր անել տալիս իւր
բանը։ Էլ ուրիշին բնչ պիտի մնար
Նատերն էլ, որոնք կարող էին օգնել գործ
տալով, ասում էին՝ «վարժապետի կնկան ով
սիրտ կանի բան անել տայ, թող գնայ իւր
երկիրը։ Անձանօթ կին է, մենք բնչ իմանանք
նրա բնութիւնը։ Փորձած սատանան մեզ հա-
մար լաւ է, քան անփորձ հրեշտակը . . .»։
Մեծ էր երեսում նրանց աչքին վարժապետը,
մեծ էր երեսում և նրա ալրին։ Բայց միայն
արտաքին հայեցակէտից։ Եւ կեղծ էր այդ
հայեցակէտը։ Կեղծ էր, քանի որ նրանք իմա-
նում էին վարժապետի գրութիւնը, քանի որ
լաւ գիտէին, որ օրական ցամաք հաց հայ-
թալիթելու կարողութիւն ունեցող մի ընտա-
նիք այդպիսի միջոցների չէր դիմիլ

Պատկառանքը, ամօթիսածութիւնը և վեր-
ջապէս ինքնասիրութիւնը դեռ թոյլ չէին
տալիս նունէին դռնէ դուռն հաց մուրալ։
Նա ուզեց մի քիչ պատուաւոր դիրքի մէջ
մնալ, պատուաւոր քան մուրացողը։ Ի՞նչ
պիտի անէր նա ուրիշի համար՝ աւելի քան

կար, կարկատան և լուացք անելը։ Այդ էր,
որ նա այս մէկը սլատուաւոր գործ էր համա-
րում, քան մուրացկանութիւնը։ Պիտի գնա՛ր,
մտնէր, ասէր, խօսէր, խնդրէ՛ր, որ գործ տա-
լին։ Ուրիշ էլ ով կար նրա համար սրտացաւ։

«Գնա՛մ, երեսս փաթաթեմ գնամ կլաֆենց
տուն, նրանցից մի քիչ լոյս կայ։ Զադրի մէջ
փաթաթուեմ գնամ, որ ինձ չտեսնեն, չըճա-
նաշեն ճանապարհին։ Նրանք քաղաքի առաջին
տունն են, հարուստ և ողորմած մարդիկ են։
Գնամ, եթէ այստեղ ինձ մի գործ տուին, այն
է որ կարող եմ մի կերպ որբերս պահել . . .»
ասում էր ինքն իրան նունէն և դանդաղ ու
կարծես մի տեսակ ակամայ կամքով ուզդում
էր իւր քալերը գէսի կլաֆենց տուն։ Ահա
նա մօտեցաւ նրանց դռան։ Նա այս տունը
դեռ չէր տեսել. խնդրել էր, ցոյց էին տուել։
Մեծ դուռը բաց էր։ Նա մտաւ ներս և սրտա-
դող լինելով բարձրացաւ սանդուղքներից ու
չադրի մէջ փաթաթուած կանդնեց պատշգամբի
մի ծայրին։

— Սամսոն, Սամսոն, մին գներս եկ, տես ով
է այն կինը, ինչ է ուզում, հրամալեց ներսից
խանումը։

Սամսոնը հարեւան սենեակն աւլում էր.
աւելը վեր գցեց ու «Ե՛ս սհաթին, խա՛նում»
ասելով դուրս գնաց: Նա մօտեցաւ կնկան և
հարցրեց:
— Ի՞նչ ես ուզում:
— Խանումին եմ տեսնելու:
— Ինչի՞ համար, ասա՛, որ իրան յայտնեմ:
— Աղքատ կին եմ. ցաւս պիտի յայտնեմ
իրան.... թէ որ ընդունի՝ այստեղ էլ կը մնամ
ծառայելու:
Ծառան ներս մտաւ և յայտնեց, որ աղքատ
կին է:
— Ի՞չ աղքատ, հարցրեց խանումը:
— Չգիտեմ, ասում է եթէ խանումը ընդու-
նի կը յալտնեմ իրան իմ ցաւս և կը մնամ
տյստեղ...:
— Ծառայելո՞ւ:
— Երեխ ծառայելու: Ասում է վարժապ...
— Հողեմ դրանց աղքատ գլուխը: Սուտ
աղուեսամեռ են տալիս, յետոյ մտնում ծա-
ռայելու. հենց որ փորերնին կշտանում է, էլ
չեն ասում թէ աչքից վերև ունք կայ: Հազար
ու մի տեսակ գողութիւն, քսութիւն, բամ-
բասանք են անում այստեղ այնտեղ և մարդի

անուն խայտառակում: Գնա՛, ասա՛ տեղ չկայ,
թող գուրս գայ, կո՞րչի:
Խանումի խօսքերը պարզ լսում էր նունէն,
և մինչև ծառայի դուրս գալն ու յալտնելը
խանումի բացասութիւնը, ինքը շուտ մի քա-
շուեց այնտեղից և սանդուղքներով, առանց
ձայն հանելու, կամաց կամաց վալը իջաւ...:
«Թող դուրս գայ կո՞րչի»—երկար ծակծկում
էր ասղի նման այս սուր խօսքը նունէի քըն-
քոյշ լարերը...: Նա գնաց, հեռացաւ այդ տա-
նից, բայց խանումի կոշտ խօսքը մտքիցը
ըընկաւ...:

Ը.

Շատ անգամ մուրացկանին այնպէ՛ս հայկո-
յում են, այնպէ՛ս գոնից դուրս քշում, որ նա
յուսահատութիւնից էլ չէ մուրում, այլ սո-
ված ընկնում է իւր տանը, սոված էլ մեռ-
նում: Շատ անգամ էլ աղքատը սովոր չէ լի-
նում մուրալու, մեռնելն իրան համար պա-
տիւ է համարում, քանթէ դռնէ դրուն հաց
մուրալը: Այս տեսակի աղքատներն աւելի շատ
են լինում մեզանում, քան իսկական աղքատ
մուրացկանները, թէև դրանք դժուարութեամբ

Են լոյս ընկնում։ Թրանք լինում են աւելի բարձր գասակարդի տներից, որոնց բաղզի կը-ծիկը ետ տալով, առևտուրն ընկնում է, փողը կորչում, կամ անիրաւ և սուտ սնանկացող վաճառականների կոկորդը կուլ գնում և նը-րանք ոչ մի տեղից լոյս չեն ունենում հայ դտնելու, ընկնում են դառն աղքատութեան մէջ, տան եղած-չեղածը թաքուն ծախում են ուտում և ձայն-ծպտուն չեն հանում, որ հա-րեանը, քաղաքացին չիմանալ թէ նա աղքատ է։ Մի թեթև կամակորութիւն էլ հայի մէջ որ կայ, այդ այն է, որ նա չի ուզում իւր նամուսը դռներն ընկնի, անուանը կոտը է գալիս...։ Այս տեսակ աղքատներին ասում են «մեծա-տուն աղքատ»։

Նունէն, Սմբատ վարժակետի այրին, ոչ ալ և ոչ այն գոյնի աղքատներիցն էր։ Սո-ված ու մերկ որբերին հայ ու շոր հասցնելու անհրաժեշտ կարիքից ստիպուած՝ նա պէտք է դիմէ՛ր ողորմութեան...։ Եւ ահա նրան մենք տեսնում ենք ամուսնու մեռնելուց մի ամիս անց, արտասուքն աչքերին, սպիտակ չադրի մէջ փաթաթուած, քաղաքի լայն փողոցներից մէկի ծայրին, մի մեծ տան պատի տակ կուչ

եկած, ամեն մի անց ու դարձ անողին պարզում էր իւր ձեռքը և առանց երեսը ցոյց տալու, հազիւ անցնողին լսելի ձայնով, խնդրում։ «Աստուած սիրաղը ողորմութիւն թող տալ, երեխայքս սոված են...։» Եւ օրական քանի անգամ, քանի անցորդի նա կրկնում էր մի և նոյն խօսքը։ Սակայն և ամեն մի կրկնելուց նրա սբատի մէջ արիւն էր կաթում։ Բայց ենչ անէր ողորմելին. դառն ճակատագրի հոսանքը մղել էր նրան մինչեւ մուրացկանութեան գիր-կը, մուրացկանութեան, որի այս տեսակը նա պատուածոր էր համարում, քան գոնէ դուռն հաց մուրալը։

Հարկաւ կարիքն աւելի էր ստիպում նրան, քան ամօթը։ Հեշտ չէր քաղաք տեղը հինգ հոգու հաց, շոր և բնակարան հասցնելն այն ընտանիքի համար, որի միակ կերակրողը մե-ռած էր։ Մեռած էր մի մշակ, որ գործում էր ազգի համար, ժողովրդի համար, բայց գետ մողովուրդը այն աստիճանի զարգացման չէր հասել, որ իմանար նրա աղքատ վիճակը, հոգ տանէր նրա որբերի կրթութեան և ապրուսի մասին։ Մեղաղբել նրան, ինչու, որ նա վար-ժապետի կին է և ողորմութիւն է հաւաքում,

որ նա քաղցած է և որբերը հաց են ուզում, որ մէկը չկայ նրան ձեռք մեկնող: Խոնչ անէ, գեռ ժողովուրդը տղէտ է, գեռ իրանը չի ճանաչում, ինքնաճանաչութեան չէ հասած...: Եւ կարիքն է ահա, կարիքը որ ստիպում է նրան ամեն օր փողոցի կողքին կուչ գալ, ձմեռուալ ցրտերին ու բուքերին դիմագրել, տանել ամեն զրկանք և տոկուն համբերութեամբ սպասել, թէ երբ մի անցորդ մի կամ կէս կոսէկ կը ձգէ դէպ իրան և նա օրուայ հաւաքած կոտէկներով երեկոյեան իւր տան համար, իւր որբերի համար մի վառելու մոմ, ու մի քանի փունթ ու հաց կառնէ...: Այս, այդ ցրտերին, երբ ամեն քաղաքացի իւր տունը քաշուած նստած է փափուկ օթոցի վրայ, տաք վառարանի առջև և երբ ձեան թանձր քուլաները երբեմն մոնչող քամու և բուքի հետ փողոցում շատ չէին թողնում կանգնելու փափուկ մուշտակաւոր և վերարկուաւոր քաղաքացուն, այդ ցրտերին աղքատը միայն, անտուն, անտէր աղքատն է փողոցում նստում և լեզուն կտրուած «ողորմութիւն» բառը միայն արտասանում: Նրա սիրտն ուրախանում է միայն այն ժամանակ, երբ մէկը շպրտում

է դէպի նրան իւր կոսկէկը, Աստուած էլ նրան իւր միտը գցելով՝ ծարւլին է տալիս արեգակի ձմեռուալ թոյլ ճառագայթը և մի փոքր կենդանութիւն ու ջերմութիւն տալիս նրա սառած, փայտ կտրուած մարմնին:

թ.

Վճռել էր, պիտի ուզէր, ողորմութիւն պիտի ուզէր նունէն և գործ գարձեց այդ իրան համար: Ուրիշ գործ չկար, չտուին նրան: Նա մենակ կլաֆենց տունը չէր գնացել գործ խնդրելու. մի երկու տեղ էլ նոյնակէս փորձել էր գնալ և փորձը նոյն բացասական պատասխանին, նոյն կոյը բաղդին էր հանդիպել:

Նա նստած է պատի տակ, գարձեալ ձեռքը մեկնում է անցնողին...: Առաւօտ է: Աղքատների աշխարհը կազմում է այս տան պատի տակը, որտեղ նրանք ամեն առաւօտ հաւաքում են և այնտեղից բաժանում: Այստեղ է գտնում կոյը իւր ման ածողին, այստեղ է որոնում աշուղը, հաց հաւաքող աշուղը, իւր ընկերներին: Կոյը, կադ, աշուղ, ալեսոր, ամեն տեսակ մեծ ու սկսիկ, երկու սեռից էլ անխտիր աղքատներ են ժողովում այստեղ ու ցրում իրանց օրուայ գործին:

Նունէն նոյն տան պատի տակն է։ Ուրիշ
յարմար տեղ չկալ. այնժեզ է գլխաւոր անցքը,
այնտեղ էին ցոյց տուել նրան։ Նա միայն մի
քիչ հեռու է նստած, հեռու աղքատների ալդ
լարիւրինթոսից։ Ինչե՞ր, ի՞նչ զգուելի պա-
տումներ չեին լինում նրանց մէջ։ Ինչե՞ր չեր
լուսմ նունէն։ Մինը սբատմում էր, որ մի
տան ինքը կենում է և ինչպէս սէր ունի տան
տիրոջ կնկայ հետ. . . . միւսը թէ ի՞նչնկէս այս
ինչ տան դունից լուսցած ու թառ տուած
շորերը գողացաւ իւր հացի խորչինի մէջ
կոխեց. . . երրորդը թէ քանի՛ տարի է, որ ինքը
ողորմութիւն է հաւաքում, ոչ կին ունի, ոչ
տուն ու տեղ, ոչ մի ուրիշ ուտող և ինչպէս
ալդ կէշակով մի քանի հարիւր մանէթ փող է
շինել։ Եւ ալսպէս ամեն մէկը մի բան էր
սբատմում, զլխաւորապէս իրան ձեռքովը եկած
մի հերսութիւն, կամ աւելի զգուելի ու սլա-
խարակելի և կամ աւելի գովութեան արժանի։
Մի և նոյն, կամ աւելի նորագոյն պատմու-
թիւններ նրանք անում էին գրեթէ ամեն օր,
ամեն առաւօտ մինչեւ բոլորի ալդտեղ թոփ
լինելը։

ՀԱՅ

տասը տարեկան տկլոր, գջլոտած տղաններ ու
աղջիկներ մուըցականութեան արհեստից երես
առած, լվտուած ու լսուակած, կպչում են ալո
ու ալս պարոնի, վաճառականի, աղալի կամ
խոյմ հորդու և ամից և ողորմութիւն խնդրում։
Մարդը հաւատում էր, որ արդարեւ աղան
խեղճ է, աղջիկն աղքատ է, ողորմելի է և
կենսական ահհրաժեշտ կարիքը նրան ողոր-
մութիւն ուզողի պաշտօնին է հասցրել, և
տալիս էր նրան ուզած ողորմութիւնը։ Հաւա-
տում էր և նունէն, որպէս հետև նոյն վիճակին
ենթարկուած էր և ինքը, իմանում էր իմէ
բոլորն էլ իւր նման սպած են։

Բայց ի՞նչ։ Մի անգամ մի տասը տարեկան
տղայ ցնցոտիների մէջ կուչ եկած, ձիւնը
ցնցոտիների միջնվ մերկ անդամներին խփելիս,
մի մարդու կողք կտրած գալիս է։ Մարդը
հայհոլում էր, բարկանուծ էր վրան, որ յետ
գառնայ, ձեռք վերցնէ իրանից, բայց տղան
չէր հեռանում, անդադար, միմեանց ետեկից,
միատեսակ խնդիրներ էր կրկնում՝ «մէն. . .
փող. . . տուր. . . , անմ. . . , հացին», կարծես ա-
ռանց վշանալու մարդու հայհոյանքից, պա-
զարիւն կերպով, ինչքան էլ նրան հայհոյում

Եր մարդը: Հաւաքը այս ձեզ մարդուն հասու
 «Հոգիս բերանս հաւաքեց էլի՛ էս շան լա-
 կոտը». ասաց մարդը և ջէրից մի սև փող հա-
 նելով շարտեց դէսլի նրան ու ինքն անցաւ:
 Տղան վերցրեց փողը, սրբեց վլուի ձիւնը,
 տնդղեց, ճանաչեց որքան է, պինդ բռնեց
 ձեռքին, մէկ դրին նալեց, մէկ արծւուն, դէսլի
 բերանը տարաւ, փչեց ձեռքերը տաքացրեց,
 փողն էլ հետը, ոտները վեր է վալը արեց,
 այս ու այն կողմը խլըշեց և լոք-լոք անե-
 լով գնաց...: Ո՞ւրի—նա կանգնեց բաղկալի
 տռաջ, այդ փողով՝ չամիչ բնեց, փեշքն ածեց
 ու մէկ մէկ դէսլի բերանը թող անելով՝ հե-
 ռացաւ բաղկալի կշտից:

«Վայ, քոռանաս դու, ալ տղայ, գոչեց ինքն
 իրան նունէն,—ալդպէս են կրթել քեզ, ալդ-
 պէս ես հաւատացնում թէ սոված եմ: Մար-
 դիկ, որ քեզ ալդպէս ճանաչեն, մեր ճամրն
 ինչ պիտի լինի...»

Բայց նա խամ էր, քանի գնաց, նստեց ալն-
 տեղ, սովորեց, ալդպէս շատ բաներ տեսաւ,
 ընդելացաւ աղքատների աշխարհին:

Նունէոյ մն ուսու ծնն ։ Տ միշն սկզբյօ ընցա-
 յի և առաջար առ և նունախոյ ու մաս մնեն
 Քաղաքի լետ ընկած փողոցներից մէկի ծայ-
 րին գտնւում էր մի բոլորովին առանձնացած
 տնակ, առանց պարսպի, առանց ծածկոցի
 (թաղթափուշ), և բաց քարահանքի մի խոր-
 թուփոս տեղում: Տնակը միայն չափարից շե-
 նած երկու սենեակ էր ներսն ու դուրսը սև,
 խամ ցեխով ծեփած, մի-մի թերթ թղթի մե-
 ծութեամբ փոքրիկ լուսամուտներով, որոնց
 լոյսը ներս էր մտնում խմորէ սոսնձով կացը-
 րած և ձիթով ներկած թղթի միջից: Սենեակ-
 ներից մէկում կենում էր ինքը տանտէրը, մի
 փոքրը փչող ալեսոր, իւր պառաւ կնկալ հետ,
 իսկ միւսում՝ մի ընտանիք բաղկացած մի մօ-
 րից և չորս փոքրիկ երեխաներից: Այդ տան
 տառուածանէր պառաւը ցերեկը նայում էր իւր
 տնկեցի երեխաներին, իսկ նրանց մայրը գնում
 էր ողորմութիւն հաւաքելու:

Այդ ընտանիքը Սմբատ վարժապետի ընտա-
 նիքն էր և ողորմութիւն հաւաքողը նունէն,
 որին ամեն օր մենք հանդիպում ենք փողո-
 ցում չափը մէջ կուչ եկած:

Բուն բարեկենդանի երեկոյին, որ հակերիս

ազիղ օրերից մէկն է և մեծ պաս են բռնում,
ամեն տուն ուրախանում և զուարձանում էր,
վայելելով իւր ունեցած ուտեաց բոլոր բա-
րիքները: Բայց այդ տնակում կարծես բարե-
կենդանի երեկոյ չկար: Նունէն որբիկներին
իւր զլիսին հաւաքած նստած էր իւր ձեռքով
կարից շինած մաղալի (կրակարան) կողքին և
չորացած ու կոշտ հացի պատառները կրակին
տաք տալով, ամեն մի պատառը հաւասար
բաժանում էր իւր փոքրիկներին: Իսկ մի կող-
քին, վերմակի մէջ փաթաթուած, տնքում էր
կարօն:

—Կարօ-ջան, մի թիքալ էլ քեզ տամ ու-
տես այս հացից. —Հարցնում էր մայրը:
—Եհ, չեմ ուզում, մայրիկ, թող պառկեմ,
կողքս ծակում է:

—Անիծած լինի այդ կողքծակոցը, որ քեզ
դիստ. այդ ինչ կը ակ էր. —ասաց նունէն և
կարօլին թեկ գցեց իւր ծնկան կը այ:

—Վայ, կողքիս ծակոցը սաստկանում է,
մայրիկ, մին ճար:

—Մի՛ վախիր, հոգի՛ս, մի քիչ քնի՛ր, ծա-
կոցը կը կտրի. —ասաց նրան մայրը և կարօլի
գլուխը ծնկներից քաշելով՝ բարձի վրայ դրաւ-

ու վերմակով ծածկեց:

Խեղջ տղան մի քիչ վայ վայ արեց ու
քնեց...: Գարեգինը նայեց իւր մօրը և տեսնելով նրան
լաց լինելիս, հարցրեց.

—Մայրիկ-ջան, ինչու ես լալիս: Գոյն
—Ոչի՞նչ, սիրելիս, գլուխուցաւում է...:

Գարեգինը լոեց. նա հաւատաց մօր խօս-
քին: Մայրն էլ չէր լալիս, որդու սիրտը չէր
ուզում կոտրի...:

—Մայրիկ, այսօր առաւօտը ես որ գնացել
էի Արշակենց տուն, Արշակի հայրը բազարից
միս, կաքաւներ, կարագ և ուրիշ շատ բաներ
բերաւ...: Մայրիկ, այսօր պաս են բռնում, հա.
էնդուր էր Արշակի հայրն այնքան բան առել,
հարցնում էր Գարեգինը:

—Այս, պաս են բռնում, սիրելիս, բարե-
կենդան է, մեծ պաս են բռնում. բայց մեզ
համար բարեկենդան չկայ... մեզ համար ա-
մեն օր պաս է. բարեկենդանը մեզանից խռո-
վել է...:

Որդին լոեց: Մօր խօսքերն ազգեցին, սաս-
տի՛կ ազգեցին նրա որտին: Նա մի քիչ լոեց
ու խօսքը փոխեց.

— Հա՛, մալրիկ, մոռացալ քեզ ասեմ. երեք շաբթի ուսումնարան պէտք է գնանք: Այսօր Արշակն ասում էր «Էլ չեմ թողնելու գրքիս վրայ դասդ սովորես»: Մալրիկ, գիրք պէտք է առնենք: Վարժապետն ամեն օր ասում է ում գիրք չունի թող առնէ:

— Բաս Յունվարին քեզ ուսումնարանում գիրք, թուղթ ու թանաք չտուի՞ն:

— Տուին. այդ էլ նոր գիրք է. երկու շաբթ չկայ, որ սկսել են:

— Վարժապետին ասի՛ր, կը տայ:


— Ասել եմ. ասում է ուսումնարանը փող չունի այնքան, որ բոլորին տայ, քեզ նման ները շատ կան, ասում է, ժողովուրդը պիտի հոգայ, նաև պիտի փող տայ, նա էլ... մտիկ չի անում ուսումնարանին....:

Մալրը երկար ոչինչ պատասխան չտուաւ որդուն, այլ միայն նրան հանգստացնելու համար ասաց, որ վեր կենայ քնէ, մինչև վաղը միւս օրը, Աստուած ողորմած է, գուցէ մի տեղից մի լոյս է ծագելու իրանց վրայ, համ գրքի փողը հասցնի, համ հացի....:

... Տէր Աստուած, մինչև Երբ պէտք է մարդիկ ալսպէս անտարբեր լինին դէպի կրանց ընկերը, դէպի եղբայրը: Միթէ չկայ մեր քաղաքում մի բարեգործ մարդ, որ իմանայ մեր ցաւը, իմանայ թէ աղքատի, անձարի որդին էլ հաց է ուզում, ուսում առնել է ցանկանում, և օգնէ նրան: Միթէ այս մարդկանց մէջ սիրտ, հոգի, գութ չկայ, որ հիմնարկեն մի ընկերութիւն, մի բարեգործական ընկերութիւն, նրանց քաղցից ազտող, ցրտից թափող ընկերութիւն, նրանց որդոց համար գիրք թուղթ, թանաք առնող և ուսումնառութեան նպաստող ընկերութիւն....: Մինչև Երբ, մինչև Երբ... Բայց ի՞նչ եմ ասում... սրանք մուրացկանին, ճշմարիտ մուրացկանին, իսկապէս քաղցածին չեն ուզում ճանաչել. բոլորին էլ միակերպ, հաւասար են ճանաչում, մի աչքով են նայում, կուշտ լինի նա թէ սոված մեռնելիս...: Եւ նունէն չկարողանալով երկար շարունակել իւր արդար բողոքը, իւր իրաւացի տրտունջը, թուլացաւ ընկաւ հիւանդ կարօդի բարձի վրայ:

Հետեւեալ առաւօտը, մեծ պասի երկուշաբթին լսւացաւ, բայց նունէն տանից դուրս

չեկաւ նայ նստած էր մարօլիս մոռոց և խուլ
 հեծկլտանքներ էր արձակում: Այսույն թվայս
 ապօն հոգեվարքի մէջ էր... բայց զդութիւն
 զնե լուսանց ցու քան զնորդոց մն նորոց ար
 միքրու կղածմա հասցրա Ֆի լուսանց գրաց
 անթեաց և լուսու նուսու նուրու և սահ չէ
 ըմաֆրանս ուս 1822 մայու մայու և նուն
 միջամնեց ցու բարձ ելուր հրու աղյու ցու
 աղյութիւն մատանցում մն ուղեղաղյութիւն ցու
 անե շնորյա ՀՀ Եկեղեց 92 Անդր շնորյա մայու
 չդիշ դանու կա ուսան օմայու աղյութիւն բայ
 մատելու ուսանում ու բան զանանց ելուր անե
 միյն պահ մատելու ու բան աղյութիւն բանալու
 անե շնորյա ... եռամ են ու աղյութիւն պահ անե
 միջամնեց միմայիշադուն աղյունէ միմայիշադ
 յի միջույն լայտան նորու մն միջամքրաց
 խոցաւ ցու և եռամնան մն շնորյան բայժան
 առն ծախու Ֆի ու միջ ուշութ նորու մն
 լուրին խորանարաց մնութ ու մ անցնե
 պահանց ու ու զգուրոց զարյա ու ու լմիամնուց
 պահանց բանադի աղյուն աղյուն ու ու պահանց



18513

2013

